

Դատական գործ N: ԵԿԴ/0117/01/10

Երբ է գործը ստացվել:	20-05-2010		
Քրեական գործի համարը:	0117/01/10		
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ		
Գործը որտեղից է ստացվել:			
Դատախազություն:	<< Գլխավոր դատախազություն		
Նախաքննական գործի համարը:	58202010		
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Մեղադրվում է այն բանի համար, որ սովորելով բժշկական համալսարանի 4-րդ կուրսում ցանկություն ունենալով աշխատանք գտնել, նամակ է գրել Բրիտանական խորհուրդ կազմակերպությանը ինտերնետով և ոմն բժշկի անունից առաջարկել է գումար վաստակել << առևտրային բանկերից որևէ մեկում		
Մեղադրյալ Անձ			
	Անուն	Հիտեշ	
	Ազգանուն	Սարաոզին	
	Հասցե	Զեյթունի հանրակացարան, 424 սենյակ	
Հոդված_1			
	Հոդված	203	Մաս 2 Կետ 2
Հոդված_1			
	Հոդված	190	Մաս 2 Կետ 2
Հոդված_1			
	Հոդված	34-178	Մաս 2 Կետ 1
Ղառվածություն:			
Պաշտպան			
	Անուն		
	Ազգանուն		
	Հասցե		
Վիճակագրական տողի համարը:	6.4		
Իրեղեն ապացույց			
Իրեղեն ապացույցի անվանումը:			
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:			
Խախտման միջոց:	Ստորագրություն չիեռանալու մասին		
Չափաիաս:	Այո		
	Երբ:	20-05-2010	
Նախագահող դատավոր			
	Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ	
	Դատավորի անուն:	Արմեն Տարիելի Խաչատրյան	
Դատավոր			

Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
Երբ:	20-05-2010
Որոշումը ուղարկվել է կողմերին:	21-05-2010
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	21-05-2010
Այլ նշումներ:	
Երբ:	11-06-2010
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Տուժողի իրավահաջորդ
Դատավարության կողմեր	
Անուն	Հիստեշ
Ազգանուն	Սարաոզի
Հասցե	ք. Երևան, Ջեյթունի հանրակացարան, 5-րդ մասնաշենք, 424 սենյակ
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Սիրանուշ
Ազգանուն	Հարությունյան
Հասցե	ք. Երևան, Կորյունի 8 շենք, բն. 5
Դատավարության կողմեր	
Անուն	Զոհրակ
Ազգանուն	Ռաֆայելով
Հասցե	ք. Երևան, Մանթաշյան փող., 10Ա շենք, բն. 10
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	01-07-2010
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	02-07-2010
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	

Երբ:	13-07-2010
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	14-07-2010
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Երբ:	17-07-2010
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	2
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-07-2010
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-07-2010
Հոդված	
Հոդված	203 Մաս 2 Կետ 2
Հոդված	
Հոդված	190 Մաս 2 Կետ 2
Մեղադրյալ	
Անուն	Հիտեշ
Ազգանուն	Սարաոզի
Հասցե	ք. Երևան, Զեյթունի հանրակացարան, 5-րդ մասնաշենք, 424 սենյակ
Ամսաթիվ:	17-07-2010
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Պատիժը պայմանականորեն չի նկարարվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	
Բռնագանձնված գույքի չափը:	

Ղատական ակտի
բովանդակությունը:

ԵԿԴ 0117/01/10

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

17.07.2010թ ք. Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ ղատավոր՝ Արմեն Խաչատրյանի,
քարտուղարությամբ՝ Փառանձեմ Բաբայանի,
մասնակցությամբ թարգմանիչ՝ Քրիստինե Խենյանի
մեղադրող՝ Գրիգոր Տիգրանյանի
պաշտպան՝ Սիրանուշ Հարությունյանի
տուժողի ներկայացուցիչ՝ Զոհրակ Ռաֆայելովի

դատարանում, դռնբաց դատական նիստում քննեց քրեական գործն
ըստ մեղադրանքի՝

Հիտեշ Սարաոզիի, ծնված 31.03.1987թ-ին Հնդկաստանի
Հանրապետությունում, ազգությամբ հնդիկ, Հնդկաստանի
քաղաքացի, սովորում է Երևանի պետական բժշկական
համալսարանի 4-րդ կորսում, չամուսնացած, չի աշխատել, խնամքին
ոչ-ոք, նախկինում չդատված, հաշվառված Հնդկաստանի
Հանրապետություն, ք. Դելի Վիվեք-Վիհար փողոց բնակարան Դ-40
հասցեում, բնակվում է ք.Երևան, Զեյթունի հանրակացարանի 5-րդ
մասնաշենք 424 սենյակ հասցեում, մեղադրանք է առաջադրվել ՀՀ
քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ
քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և
ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,
որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին
ստորագրությունը:

2010 թվականի մարտի 2-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում
ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 34-
178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 34-190-րդ հոդվածի 2-րդ
մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ թիվ 58202010
քրեական գործը: 2010թ-ի ապրիլի 7-ին Հիտեշ Սարաոզին որպես
մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի
2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով
և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն արարքի
կատարման համար, որ «նա հանդիսանալով Երևանի բժշկական
համալսարանի չորրորդ կուրսի ուսանող ցանկություն ունենալով
գտնել որևէ աշխատանք, նամակ է ուղարկել «Բրիտանական
Խորհուրդ» կազմակերպությանը ինտերնետ ցանցով
էլեկտրոնային նամակագրությամբ, որտեղից էլ 2009թ. նոյեմբերին
իր էլեկտրոնային հասցեին նամակ է ստացել ոմն բժիշկ Լի Հարթվելի
անունից «fhere.leehartwell@hotmail.com» էլեկտրոնային հասցեից,
որով առաջարկվել է գումար վաստակել ՀՀ առևտրային բանկերից
որևէ մեկում «American Express» ձանապարհային չեկերի
կանխիկացումից գումարի 90 տոկոսը Մեծ Բրիտանիա՝ Լոնդոն,
Ղավիդ Սփրիի անունով հետ փոխանցելու, իսկ մնացած 10 տոկոսը
որպես բաժնեմաս տնօրինելու պայմանով: Կեղծ վճարային
փաստաթղթերի օգտագործմամբ ՀՀ առևտրային բանկերից

գումարներ հափշտակելու, ապա հանցավոր ճանապարհով ստացված հափշտակված գումարի 90 տոկոսն օրինականացնելու՝ Մեծ Բրիտանիա փոխանցելու կապակցությամբ էլեկտրոնային նամակագրությամբ նախնական համաձայնության գալուց հետո, 2010թ-ի հունվարի 26-ին Հիտեշ Սարաոգիի անվամբ Հայաստան է ուղարկվել փաթեթ «American Express» ճանապարհային 4 չլրացված չեկերով, ապա էլեկտրոնային փոստով ստացվել է պարզաբանող ուղեցույց չեկերը լրացնելու, բանկ ներկայացնելու և կանխիկացնելու մեխանիզմի վերաբերյալ: Հիտեշ Սարաոգին 500 ԱՄՆ դոլար արժողության «American Express» ճանապարհային 4 չեկերն իր անվանական տվյալներով լրացնելուց հետո 2010թ փետրվարի 1-ին դրանք ներկայացրել է «Կոնվերսբանկ» ՓԲ ընկերության գլխամաս 752.100 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար ստանալու համար, սակայն բանկի աշխատակիցները հայտնաբերել են կեղծիքը և դեպքի մասին հայտնել իրավապահ մարմիններին, որի արդյունքում նրա կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունը կանխվել է»: 2010 թվականի մայիսի 17-ին թիվ 58202010 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ նույնի քննելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Հիտեշ Սարաոգին իրեն մեղավոր ճանաչեց և ցուցմունք տվեց այն մասին, որ սովորում է Երևանի բժշկական համալսարանում: Վերջին երկու տարիներին իր ընտանեկան դրությունը այնքան էլ լավ չի եղել, ուստի փորձել է ինտեռնետ ցանցի միջոցով աշխատանք գտնել: Աշխատանք փնտրելու մասին հայտարարություն է տեղադրել տարբեր աշխատանքային կայքերում, ինչպես նաև էլեկտրոնային նամակ է ուղարկել «Բրիտանական խորհուրդ» կազմակերպության էլեկտրոնային հասցեին: Որոշ ժամանակ անց իր էլեկտրոնային հասցեին մինչ այդ իրեն անձանոթ բժիշկ Լի Հարթվելից էլեկտրոնային նամակ է ստացել, որով բժիշտ Հարթվելը ցանկացել է տեղեկանալ իր աշխատանք ունենալու ցանկության մասին: Պատասխան էլեկտրոնային նամակով հաստատել է աշխատանք գտնելու իր ցանկությունը և նրան է ուղարկել իր տվյալները և բնակության հասցեն: Այդ ամենից հետո, ստացել է ևս մեկ հաղորդագրություն, որում բժիշկը հայտնել է, որ իր անվամբ ուղարկում է չլրացված ճանապարհային չեկեր, որոնք պետք բանկի միջոցով կանխիկացնել, ստանալ 2000 ԱՄՆ դոլար, ստացված գումարի 10 տոկոսը իրեն պահել, իսկ մնացածը հետ ուղարկել Մեծ Բրիտանիա բժշկի աշխատակցի Դեվիդ Սփրիի անվամբ: Նամակում բժիշկը մանրամասն նկարագրել է իր գործողությունները, թե ստացվելիք չեկերի վրա որտեղ ինչ պետք լրացնել և հայտնել է, որ այդպիսով իրենք օգնում են քաղցկեղով հիվանդ անձանց Մեծ Բրիտանիայում: Ներկայացրել է, որ չեքերն իրենց կազմակերպությանն են տվել բարեբարները: Համացանցի միջոցով տեղեկություններ է փնտրել Լի Հարթվելի մասին և տեղեկանալով, որ վերջինս հայտնի գիտնական է ու արժանացել է Նոբելյան մրցանակի, որևէ բան չի կասկածել: 2010թ-ի հունվար ամսին հանրակացարանի պահակը իրեն է տվել փակ ծրար, որը բացելով հայտնաբերել է 500 ԱՄՆ դոլար արժեքով 4 ճանապարհային չեկեր, որոնք, բժշկի ուղեցույցի համաձայն լրացնելով, փետրվարի 1-ին ներկայացրել է բանկ՝ գումարը ստանալու համար, սակայն բանկում տեղեկացել է, որ իր կողմից ներկայացված չեկերը կեղծ են, ինչի պատճառով դրանք առգրավվել են: Դարանից հետո բժշկի հետ կապ չի պահպանել:

Տուժողի ներկայացուցիչ Ջոիրակ Ռաֆայելովը ցուցմունք տվեց այն մասին, որ աշխատում է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում որպես ֆինանսական դիտարկումների և վերահսկողության վարչության պետ: 2010թ-ի փետրվարի 1-ին ժամը 12:00-ից 13:00-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքի վայրում իրեն զանգահարել և

տեղեկացրել են, որ ազգությամբ հնդիկ մի երիտասարդ մոտեցել է քանկի հաճախորդների սպասարկման գրասենյակի աշխատակցուհի Արփինե Մնացականյանին և ցանկացել է կանխիկացնել «American Express» բանկի կեղծ ճանապարհային չեկեր: Բանկում կազմվել է հանձնաժողով և կեղծ ճանապարհային չեկեր հայտնաբերելու մասին ակտ, որից հետո չեկերը իրենց կողմից առգրավվել են, փաթեթավորվել և կնիքվել են: Կեղծ չեկեր ներկայացնող անձն հանդիսացել է ամբաստանյալ Հիտեշ Սարաոգին, որն իր արարքը պատճառաբանել է, թե Անգլայից ինչ որ բժիշկ է ուղարկել իրեն այդ չեկերը և խնդրել է կանխիկացնել գումարն ու ուղարկել իրեն: Մի քանի օր անց առգրավված չեկերը ուղարկվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:

Վկա Արփինե Մնացականյանը ցուցմունք տվեց այն մասին, որ աշխատում է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում որպես գանձապահ: 2010թ-ի փետրվարի 1-ին իր աշխատանքային պարտականությունները իրականացնելիս, իրեն է մոտեցել ամբաստանյալը և կանխիկացնելու համար տվել է «American Express»

ճանապարհային 4 չեկեր՝ յուրաքանչյուրը 500 ԱՄՆ դոլար արժողությամբ: Չեկերն առաջին հայացքից իրեն կասկածելի են թվացել, ինչի պատճառով սկսել է դրանք ուսումնասիրել: Չեկերի գույները խախտված են եղել, թուղթն անորակ է եղել և չի համապատասխանել իրական չեկերի թղթերի որակին, իսկ դիմանշանի վրայի գծերը շատ կոպիտ ձևով են արտահատված եղել: Այդ ժամանակ կապնվել է ՌԴ Մոսկվա քաղաքի հատուկ բաժանմունքի հետ, որը զբաղվում է ճանապարհային չեկերի իսկությունը հաստատելով: Հեռախոսագրույցի արդյունքում պարզել է, որ իրեն ներկայացված համարներով չեկեր գոյություն չունեն և հետևաբար կեղծ են: Այդ մասին զեկուցել է անմիջական ղեկավարին, որից հետո հնդիկին ուղեկցել են անվտանգության բաժին, որտեղ կազմվել է համապատասխան հանձնաժողով և չեկերը առգրավվել են: Չեկերի իրական լինելը պարզելը տևել է մոտ 15 րոպե և այդ ժամանակահատվածում Հիտեշը սպասել է իրեն և մեկ անգամ հետաքրքրվել է, թե ինչու է ուշացվում կանխիկացումը: Փաստաթղթաբանական փորձաքննության փորձագետի թիվ 05771001 եզրակացության համաձայն «RH646-898-258», «RH646-898-259», «RH646-898-243», «RH646-898-265» սերիայի համարներով «American Express» ճանապարհային չեկերը չեն համապատասխանում ԱՄՆ պետական ստանդարտ թողարկմանը և պատշառվել են օֆսեթ տպագրական եղանակով:

Համապատասխան որոշմամբ «RH646-898-258», «RH646-898-259», «RH646-898-243», «RH646-898-265» սերիայի համարներով «American Express» ճանապարհային չեկերը ճանաչվել են որպես իրեղեն ապացույց:

Վերլուծելով ամբաստանյալ Հիտեշ Սարաոգին առաջադրված մեղադրանքները և գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել և հռչակել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցանքների կատարման մեջ Հիտեշ Սարաոգիի անմեղությունը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով: Այսինքն՝ քրեական պատասխանատվության հիմքում ընկած են ոչ թե անձի հակահասարակական հատկությունները, նրա գաղափարները, հայացքները, այլ կոնկրետ հանցավոր արարքը և անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքում,

երբ նրա մտադրությունները, գաղափարները դրսևորվել են կոնկրետ արարքի կատարման մեջ, առարկայացել են այդ արարքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հանցագործություն է համարվում մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության վերլուծությունից հետևում է, որ սույն հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում նաև հանցագործության առարկան՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը: Որպեսզի Հ. Սարաոգիի արարքում հաստատվեն ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշներ, անհրաժեշտ է, որպեսզի արարքում առկա լինեն նաև հանցակազմի օբյեկտի բոլոր հատկանիշները՝ այդ թվում նաև հանցագործության առարկան: Տվյալ դեպքում Հ. Սարաոգիի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հանցագործության առարկան՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, իսկ դրա բացակայության պարագայում Հ. Սարաոգիի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Ինչ վերաբերում է ամբաստանյալի կողմից նշած այն հանգամանքին, թե հանցավոր ճանապարհով գումար ստանալու դեպքում այն բանկային փոխանցման միջոցով ուղարկելու էր ոմն Դավիդ Ափրիին, ապա ընդամենը նա ունեցել է այդպիսի դիտավորություն, ինչի բացահայտումը հանցագործության նախապատրաստություն և առավել ևս հանցափորձ չի հանդիսանում: Այսինքն՝ ամբաստանյալի դիտավորության բացահայտումը հանցագործության փուլ չի համարվում:

ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հանցագործություն է համարվում մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կեղծ վճարային փաստաթղթեր՝ արժեթղթեր կամ արժույթ կամ արժեթուղթ չհամարվող, սակայն գույքային իրավունքների մասին վկայող, դրանք սահմանող կամ տրամադրող այլ փաստաթղթեր իրացնելու նպատակով պատրաստելը կամ իրացնելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության վերլուծությունից հետևում է, որ սույն հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու դեպքում սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում դրանց իրացման նպատակը: Եթե հիշյալ փաստաթղթերը պատրաստելիս իրացման նպատակը բացակայում է, ապա անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու համար կամ իրացնելու համար պատասխանատվություն սահմանող նորմով: Եթե վճարային փաստաթուղթը կեղծվում է ոչ թե այն իրացնելու, այլ խաբեությամբ

ուրիշի գույքին ապօրինի տիրանալու համար, արարքը պետք է որակվի որպես խարդախության նախապատրաստություն, իսկ եթե հանցավորը կեղծված վճարային փաստաթուղթն օգտագործելով խաբեությամբ փորձել է տիրանալ ուրիշի գույքին, սակայն չի կարողացել իրագործել իր նպատակն իր կամքից անկախ հանգամանքներով` ապա արարքը պետք է որակել որպես խարդախություն հանցավորո՞ծ: Տվյալ դեպքում Հիտեշ Սարաոգին կեղծելով վճարային փաստաթուղթը դրանք իրացնելու նպատակ չի ունեցել և չի իրացրել դրանք, այլ ցանկացել է կեղծված վճարային փաստաթուղթի օգտագործմամբ խաբեության եղանակով ապօրինի տիրանալ «Կոնվերսանկ» ՓԲԸ-ի 752.100 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար խոշոր չափով գույքին, սակայն հանցագործությունը ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներում, քանի որ բանկի աշխատակիցների կողմից կեղծիքը հայտնաբերվել է: Հետևաբար ամբաստանյալի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանը պարտավոր է արարքում հանցակազմի բացակայության դեպքում կայացնել արդարացման դատավճիռ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունն այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ, տվյալ դեպքում` ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Այսպիսով, վերլուծելով և գնահատելով դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ, դատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում այն, որ ամբաստանյալ Հիտեշ Սարաոգին 2010թ-ի հունվարի 26-ին փոստով ստանալով «American Express» 500 ԱՄՆ դոլար անվանական արժեքով ճանապարհային 4 չլարացված չեկերը, խաբեության եղանակով ուրիշի խոշոր չափերով գույքի հափշտակության նպատակով դրանցում լրացրել է իր տվյալները և 2010թ-ի փետրվարի 1-ին դրանք ներկայացրել է «Կոնվերսանկ» ՓԲԸ-ի գլխամաս և ցանկացել է տիրանալ բանկի` 752.100 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլարին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ բանկի աշխատակիցների կողմից կեղծիքը հայտնաբերվել է: Այսինքն` ամբաստանյալ Հ. Սարաոգին կատարել է հանցավոր արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին, որով էլ նա ենթակա է քրեական պատասխանատվության:

Նման եզրահանգման համար դատարանը հիմք է ընդունում ամբաստանյալի, տուժողի ներկայացուցչի և վկայի ցուցմունքները, իրեղեն ապացույցների առկայությունը, քանի որ դրանք հստակ, օբյեկտիվ ու ճշմարտացի են, համապատասխանում են դատարանի կողմից հաստատված գործի փաստական հանգամանքներին և հաստատվում են գործի մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ. Սարաոգիի մեղքը հիմնավորող ապացույցները ձեռք են բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ և դրանք բավարար են գործի ճիշտ լուծման համար: Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, այն որ ամբաստանյալը երիտասարդ է, ուսանող է, բնութագրվում է դրականորեն և նախկինում դատված ու արատավորված չի եղել: Որպես ամբաստանյալ Հիտեշ Սարաոգիի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում

այն, որ ամբաստանյալը առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ է կատարել հանցանքը, ընդունել է մեղքը և խոստովանական ցուցմունքներով աջակցել է հանցագործության բացահայտմանը:

Ամբաստանյալ Հիտեշ Սարաոգիի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Ղատարանը գտնում է, որ Հիտեշ Սարաոգիին իր կատարած հանցանքի համար ենթակա է պատժի և միաժամանակ հաշվի առնելով հանցավորի վերը շարադրված անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է պատիժը պայմանականորեն չկիրառելու, սակայն նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պայմաններում:

Ղատարանը գտնում է, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Հիտեշ Սարաոգիի նկատմամբ ընտրված խափանման միջոցը պետք է վերացնել:

Քննարկելով իրեղեն ապացույցների հարցը, դատարանը գտնում է, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույց հանդիսացող «American Express» ճանապարհային թվով 4 հատ կեղծ չեկերը պետք է պահել քրեական գործի հետ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, 119, 357-360-րդ, 365-րդ, 366-րդ 369-372-րդ և 374-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ճանաչել և հռչակել ամբաստանյալ Հիտեշ Սարաոգիի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքներում:

Ամբաստանյալ Հիտեշ Սարաոգիին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ և նրան դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 /երեք/ տարի ժամկետով:

Ղատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Հիտեշ Սարաոգիի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

Հիտեշ Սարաոգիի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության նրա բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնին, որի սկիզբը հաշվել քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում նրան հաշվառման վերցնելու պահից:

Ղատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույց հանդիսացող «American Express» ճանապարհային թվով 4 հատ կեղծ չեկերը պետք է քրեական գործի հետ:

Ղատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում:

դատավոր՝ Ա. Խաչատրյան

Ղատական ակտի ամսաթիվը:

17-07-2010

Ամսաթիվ:	21-08-2010
Գործը հանձնվել է գրասենյակ:	23-08-2010
Էջերի քանակ:	186
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-08-2010
Էջերի քանակ:	186
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-07-2011
Էջերի քանակ:	*
Գործին կից նյութեր:	
Դատարան:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Ելքի համար:	*
Այլ նշումներ:	միայն էլեկտրոնային քարտը
Դատական Գործ N: ԵԿԴ/0117/01/10	
Ամսաթիվ:	21-07-2011
Ամսաթիվ:	12-07-2011
Ամբաստանյալ/Դատապարտյալ	
Անուն	Հիտեշ
Ազգանուն	Սարաոզի
Հասցե	Զեյթունի հանրակացան, 52.424 սեն.
Դատարանի նախաձեռնությամբ:	
Միջնորդություն ներկայացնող:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	12-07-2011
Դատարան:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Հանձնվել է դատավորին	
Դատարանի անվանում:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Դատավորի անուն:	Արմեն Տարիելի Խաչատրյան